Պրոֆեսոր Ջուզեպպե Մարչին իտալական բանասիրություն և սարդինական գրականություն է դասավանդում Կալիարիի համալսարանի հումանիտար առարկաների ֆակուլտետում: Նա դասավանդել է նաև Սասսարիի համալսարանում: 2010-2012թթ. եղել է Կալիարիի համալսարանի օտար լեզուների և գրականության ֆակուլտետի դեկան:
Լինելով Սարդինիայի բանասիրական գիտությունների կենտրոնի ղեկավար՝ Ջուզեպպե Մարչին հետևում է «Սարդինիայի գրողներ» շարքի հրատարակությանը, գրական-լրագրողական ասպարեզում իրականացնում է հրատարակչական գործունեություն: Հիմնադրել և ղեկավարել է NAE մշակութային եռամսյա լրագիրը (2002-2008թթ):
Պրոֆեսորն ուսումնասիրել է այն մեթոդները, ըստ որոնց զարգացել է իտալական գրականությունը տարբեր ժամանակաշրջաններում և աշխարհագրական հատվածներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով Սարդինիայի և Սիցիլիայի առանձնահատկություններին: Զբաղվել է 18-րդ դարի ինքնակենսագրական աշխատանքներով (Ջակոմո Կազանովա) և 20-րդ դարի արձակով (Բեպպե Ֆենոլիո, Սերջիո, Ատձենի):
Սրբագրել է 18-րդ դարի հեղինակներ Դոմենիկո Սիմոնի, Ջուզեպպե Կոսսուի, Անտոնիո Պուրկեդդուի, Անդրեա Մանկա Դել Արկայի, Պիետրո Լեոյի դիդակտիկ աշխատությունները, 19-րդ դարի գրող Էնրիկո Կոստայի ստեղծագործությունները, Վիչենցո Սուլիսի ինքնակենսագրականը, 20-րդ դարի գրող Սալվատորե Սատտայի աշխատանքները, Էջիդիո Պիլիայի գիտական հետազոտությունները և Ումբերտո Կարդիայի ինքնակենսագրականը:
Ջուզեպպե Մարչին հեղինակել է *«Սարդինիայի գրականություն: Աշխարհի բոլոր լեզուների առկայությամբ»* գիրքը, որում հետազոտելով սարդինական գրականության յուրահատկությունները հինավուրց ժամանակներից մինչև մեր օրերը՝ ուսումնասիրում է չափանիշ համարվող գրողների և գրական երկերի թեման, հռչակավոր և քիչ հայտնի գրողների, ինչպես նաև հանրահայտ տրադիցիոն գրական ստեղծագործությունների և ծայրամասերում ստեղծված աշխատությունների միջև եղած հարաբերությունները:

Euro 4,00

ISBN 978-88-8467-877-5